«Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի Հուլիսի 2-ի N 1129-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ 2026 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ

ՀՈՒԼԻՍԻ 2-Ի N 1129-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 48.2-րդ հոդվածի 5-րդ մասը
և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 2-ի «Ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի միանգամյա

թույլտվության ձևը և տրամադրման կարգը սահմանելու մասին» N 1129-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) Որոշման N 1 հավելվածում.

ա. 2-րդ կետում «ջրամբարների» բառից հետո լրացնել «կամ գետերի հուների արգելապատնեշների» բառերը,

բ. 3-րդ կետում «ջրամբարների» բառից հետո լրացնել «կամ գետերի հուների արգելապատնեշների» բառերը,

գ. 4-րդ կետում «ջրամբարների» բառից հետո լրացնել «կամ գետերի հուների արգելապատնեշների» բառերը,

դ. 5-րդ կետի 4-րդ ենթակետում «ջրամբարների» բառից հետո լրացնել «կամ գետերի հուների արգելապատնեշների» բառերը,

ե. 10-րդ կետի 3-րդ ենթակետում «ջրամբարների» բառից հետո լրացնել «կամ գետերի հուների արգելապատնեշների» բառերը,

զ. 16-րդ կետում «ջրամբարների» բառից հետո լրացնել «կամ գետերի հուների արգելապատնեշների» բառերը,

2) Որոշման N 2 հավելվածով սահմանված ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի միանգամյա թույլտվության ձևի նախավերջին տողում «ջրամբարների» բառից հետո լրացնել «կամ գետերի հուների արգելապատնեշների» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**

Երևան